ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՔԱՐԿՈՓ ՀԱՄԱՅՆՔ

2013-2017թթ.

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ՔԱՌԱՄՅԱ

# ԾՐԱԳԻՐ

Հաստատված է Քարկոփ համայնքի ավագանու կողմից

Համայնքի ղեկավար՝ Ժ.Այբեկյան

# ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գյուղը հիմնվել է խճի հանքի բացումից և գործարանի շահագործումից հետո: 1935-1937թթ. գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքից 25 կմ հեռավորության վրա, Դեբեդ գետի ձախ ափին: Բնակչությունը ըստ գրանցման 418 մարդ է: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 600 մ բարձրության վրա:

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Գյուղում ապրում է 418 բնակիչներ, որոնցից արական `212, իգական 236 մարդ:*

*Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է.*

| | |
|---|---|
| երեխաներ (0-6) | 20 |
| դպրոցականներ 7-17 | 54 |
| 18-62 տարեկան | 210 |
| Թոշակառուներ | 60 |
| Հաշմանդամներ | 7 |
| աշխատունակներ | 30 |

Գյուղն ունի 101 ծուխ, որոնցից 50-ը ընդգրկված են «Փարոս» համակարգում, որից 12` նպաստառու:

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Համայնքի ինքնակառավարումը իրականացնում է ավագանին` կազմված 5 անձից և գյուղապետը:

Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

| | |
|---|---|
| Գյուղապետի օգնական | 1 դրույք |
| Աշխատակազմի քարտուղար | 1 դրույք |
| 2-րդ կարգի մասնագետ | 1 դրույք |

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի միջնակարգ դպրոց մեկ մասնաշենքով մանկապարտեզի շենք 2 մասնաշենքով: Ներկայումս դպրոցի շենքը ենթակա է հիմնանորոգման, դպրոցում սովորում են 41 աշակերտ, աշխատում են 12 ուսուցիչ:

Մանկապարտեզը չի գործում:

## ՄՇԱԿՈՒՅԹ

Համայնքն ունի ակումբի շենք, որտեղ տեղավորված են չգործող գրադարան, շենքը ենթակա է հիմնանորոգման:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒ

Համայնքն ունի մանկական բուժ. կետ: Աշխատում է մեկ բուժ. քույր:

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 101 սեփականաշնորհված բնակարաններ: Կան բազմաթիվ կիսակառույց տներ: 1988թ. երկրաշարժից հետո բնակչության սոցիալ-տնտեսական վատ վիճակի պատճառով չեն վերանորոգվել:

## ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Քաղաքի հետ կապը իրականացվում է տաքսիների միջոցով:

## ՃԱՆԱՊԱՐՀԸ

Համայնքը գտնվում է հանրապետական մայրուղու վրա, որը գտնվում է բարվոք վիճակում: Ներհամայնքային ճանապարհի երկարությունը 1 կմ է, որը ոչ բարեկարգ վիճակում է:

Բուժսպասարկում

Բուժսպասարկումը կատարվում է տնային պայմաններում, քանի որ համայնքում բացակայում է բուժկետը:

Գազ

Համայնքը գազաֆիկացված չէ:

Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

Ռազմավարություն

Բարեփոխումներ անցկացնելու նպատակով հետևողականորեն բարելավել համայնքի սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ և ամենակիրթ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

1. Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը, հանգիստը աշխատանքից ազատ ժամանակ:
2. Համայնքը ապահովել շուրջօրյա խմելու ջրով, կառուցել խմելու ջրի մատակարարման ներքին ցանց և կանխել սուր վարակիչ հիվանդությունները:
3. Գազաֆիկացնել համայնքը:

Ճանապարհների ասֆալտապատում

Ներհամայնքային ճանապարհի բարեկարգում, ասֆալտապատում:

## ԾՐԱԳԻՐ 2

**Ակումբի շենքի վերանորոգում**

Ակումբի և մանկապարտեզի շենքերի վերանորոգում:

## ԾՐԱԳԻՐ 3

**Ներածություն:** Քարկոփի բուժկետը սպասարկվում է Ախթալայի առողջության կենտրոնի կողմից: Չկան համապատասխան պայմաններ, դեղատուն: Սպասարկումն իրականացվում է տնային պայմաններում, որտեղ չկան տարրական պայմաններ բուժսպասարկումն արդյունավետ իրականացնելու համար:

**Ծրագրի իրականացման նպատակներն են.**

Անհրաժեշտ է կառուցել բուժկետ՝ տիպային պայմաններով, որը կապահովի բնակչության առողջապահության հետ կապված խնդիրները:

## ԾՐԱԳԻՐ 4

**Ներածություն:** Համայնքը գազաֆիկացված չէ:

**Խնդիրը.** Գազաֆիկացումն իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությունը: